# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# ԵՄ-ԲՄԱՊՁԲ-22/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան**

**25.04.2022թ.**

08.04.2022-25.04.2022թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ թունելային հզոր օդափոխիչների (ապամոնտաժումով և տեղադրումով) ձեռքբերման ԵՄ-ԲՄԱՊՁԲ-22/13 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ս. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի պետ, |
| Գ. Մխիթարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ռ. Մնացականյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի Շարժասանդուղքների սպասարկման ուղեմասի պետ, |
| Գ. Թամազյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի Աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի ինժեներ, |
| Ա. Բաբայան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Էլեկտրամեխանիկական» մասնաճյուղի Էլեկտրամեխանիկական ուղեմասի պետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ս. Մնացականյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ գնումների և մատակարարման բաժնի գնումների գլխավոր մասնագետը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Ընթացակարգի հայտերի բացման մասին:

3. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

2022թ.-ի ապրիլի 8-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և արձանագրեց, որ Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | Էլ. հասցե |
| 1 | «Ալեռտո» ՍՊԸ | 02686862 | ք. Երևան, Նաիրիր Զարյան 74 Բ | 0037498 28-29-38 | info@alerto.am |
| 2 | ЗАО ЛАДА-ФЛЕКТ | 6320007045 | 445038, Российская Федерация, Самарская область, город Тольятти, улица Вокзальная, 110 | +7(8482)758866 | info@lada-flakt.ru |
| 3 | АО АМЗ ВЕНТПРОМ | 6602010624 | 623780, Российская Федерация, Свердловская область, Артемовский район, город Артемовский, улица Садовая, 12 | +7-34363-58-100 | ventprom@ventprom.com |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացկարգի կազմակերպման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը, այդ թվում՝ գնման հայտը և ընթացկարգով նախատեսված գնահատումներն իրականցնելու համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը, բացակայում են:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Հիմք ընդունելով Կարգի 27-րդ կետով սահմանված պահանջները՝ Հանձնարարել Ընթացակարգի քարտուղարին 14.04.2022թ.-ին գրավոր զեկուցել Պատվիրատուի ղեկավարին՝ Ընթացկարգի բնական ընթացքը վերականգնելու համար ձեռնարկել միջոցներ:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Վերոնշյալ փաստաթղթերը 25.04.022 դրությամբ դեռևս առկա չեն:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. 25.04.2022թ.-ից Ընթացակարգի նիստը կասեցնել մինչև տվյալ գործի մասով ծառայողական քննության ավարտը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐԸ, ԺԱՄԸ ԵՎ ՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:
2. Ընթացակարգի Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը սահմանել համապատասխանաբար սույն արձանագրության 3-րդ կետով սահմանված ծառայողական քննության ավարտին հաջորդող 1-ին աշխատանքային օրվա ժամը 10:00-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ս. Մնացականյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Մխիթարյան

Ռ. Մնացականյան

Գ. Թամազյան

Ա. Բաբայան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան